

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱԹՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Տր.
Վեցամսեայ 4 Տր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Տր.
Վեցամսեայ 5 Տր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՏԷ

Pédaction du Journal

«Ira vounk»

Varna

едакция на

Вѣстникъ

«Нравуникъ»

Варна

Գրութիւնք և տպոյնք

rev. Pere G. Kalemkérian
tengasce № 4
Michitaris
Vienne

ՀՐԱՏԱՊԵՐԻՐԸ

Ս. Պատրիարքը կը մնայ իր հրաժարականին վրայ, Կիլիկիոյ վերջին կախաղանները որոնք 40ի չափ թուրք շարագործներու գոյութեան վերջ տուին, գոհացում չի նկատուեցան Դուռեան սրբազանի արդար և սկզբունքային պահանջներուն, որ ըրած է կառավարութեան:

Ճէպէլի Պէտէքէթի նախորդ կառավարիչ ոճրապարտ Ասաֆին վերջին օրերս 4 տարի բանտարկութեան դատապարտուիլը Հայոց Պատրիարքին գոհացում նշկատողներ կատարեալ պարտութիւն մը կրեցին այն թուումն մասնացով, զոր ըրաւ Պատրիարք Հայրը իրեն ներկայացող ու վերադարձը խնդրող թէ՛ պետական և թէ ազգային պաշտօնէութեանց:

Խառն ժողովը իր վերջին նիստին մէջ զբաղեցաւ Պատրիարքի խնդրով, ժողովին մէջ երկու կարծիք կար, կըսէ Բիւզանդիոն, որ մանր կ'ըսէին թէ վերջին անգամ տեղի ունեցած մահու պատիժները, որոնց մէջ գլխաւոր յանցաւորներն ալ պատժուեցան, ինչպէս նաեւ Ասաֆի դատապարտութիւնն և վարչապետին ու նախարարաց բարեացակամութիւնը պէտք է աւելի ըլլան որ Ս. Պատրիարք Հայրը գայ և իր դիմումներն անձամբ շարունակէ: Ժողովականներու միւս մասը կ'ըսէ թէ Ատանայի պատերազմական ատենէն տրուած մահու պատիժները Պատրիարքական հրաժարականին հետ ո' և է կապ չունին, նոյն իսկ Ասաֆի յանցաւորութիւնը նախարարաց խորհուրդն որոշեց այն պահուն, երբ Ս. Պատրիարքն հրաժարած չէր տակաւին, ուստի ասոնք բերել կապել հրաժարականի խնդրոյն անտեղի է, ասկէ դուրս Ս. Պատրիարքն որբերու և որբեւայրիներու, Անթաքիոյ մէջ տիրող խղճալի վիճակին և հոն դատապարտուած ըլլալով արձակ

հաճարձակ պատուը դրդիչներու և գլխաւոր պատասխանատուներու խնդիրն ըրած է, որոնք ո' և է կերպով նկատողութեան չեն առնուած. ուստի փոխանակ ինք գալու և անձամբ ընելու այս դիմումները, ժողովն ինք ընէ այս խնդրը վարչապետին մօտ, որ խոստացած էր գոհացում տալ Ս. Պատրիարքին Այս վերջին կարծիքն օրուան պէտքին աւելի համապատասխան նկատուեցաւ, ինչ որ Ս. Պատրիարք Հայրը կարծիքն է, ուստի որոշուեցաւ վարչապետին ներկայացնել Կիլիկիոյ աղէտը մեղմացնելու և Ս. Պատրիարք Հայրն իր Աթոռը բերելու միջոցներն և հնարաւորութիւնները, և երբ անոնք գործնական ուղղութիւն մ'ըստանան, այն ատեն հրաւիրել նորին Սրբազանութիւնը, քանի որ Ազգ. ժողովն արդէն իսկ արտօնած է Վարչութիւնն հարկ դատած ատեն առաջնորդելու Ս. Պատրիարք Հայրն իր Աթոռը:

Խառն ժողովոյ այս որոշումը գոհացուցիչ գտնելով հանդերձ չենք կրնար չի ցաւիլ տարակարծիք գտնուող անդամներէն ու մանց խորհրդակերպին վրայ, Ասոնք պէտք է գիտնան թէ Հայոց Պատրիարքին իր Աթոռը վերադարձը ընդհանուր աշխարհի առջև պիտի թողու այն տպաւորութիւնը թէ սահմանադրական թուրք կառավարութեան թոյլատրած և ներքնապէս թելադրած Կիլիկիոյ հայաջինջ աղէտը Հայ Ազգը ներած է թուրք տարրին և գոհացում տուցած կառավարութեան: Մինչդեռ այսօրուան իրողութիւնը ասոր հակառակն է. որովհետեւ ոչ մէկ հայ կրնայ ներել այն թուրքին որ իր եղբորը արիւնը թափելէ վերջ, իր տունէն յափշտակած իրեղէնները կը վայելէ այսօր ազատ համարձակ, իսկ ինք մերկ և անպատսպար կը դեպքերի մոխրակոյտներու վրայ, նոյնպէս չէ կարե-

ւի գոհացում նկատել քանի մը թուրք սրիկաներու կախուիլը, երբ Ասաֆի պէս իհասն ֆիքրիի պէս պաշտօնեայ և էջրէֆներ, բուն թելադրիչներ, ազատ օգրէ շնչեն, մինչ անդին անմեղ հայեր ինքնապաշտպանութիւն փորձելուն համար բանտերու խորքը կը հեծեն. բիւրաւոր հայ ընտանիքներ մերկ ու նոթի կը ձգուին, հազարաւոր որբեր պատառ մը հացի փոխարէն հայութեան խելու ճիգեր կը թափուին նոյն իսկ օրուան վաղիին կողմէ:

Իրաց այս վիճակին մէջ Հայոց Պատրիարքը իր Աթոռը վերադարձնելով ուրիշ բան ըրած չենք ըլլար, եթէ ոչ ստրկօրէն համակերպած ոչխարներու հօտի մը վիճակին որ սպանդանոց կը քշուի, Հայերուս կողմէ այդ տեսակ ստրկական համակերպութիւն մը օտարներու գոնէ կարեկցութեանը, գոնէ արգահատանքին ալ չարժանանար, այլ զղուանքին:

Յ. Պուրպիք

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ժէօն թիւրք կառավարութեան իր նախորդին նման քմահաճ վարմամբ քրիստոնեայ ցեղերու հանգէպ, կարճ ժամանակի մէջ անհանդուրժելի դարձաւ Մակեդոնիոյ մէջ. ուր սակայն կոտորածներ չեղան Կիլիկիոյ նման, ոչ ալ հինգ, վեց ինը հօգին մէկէն սպաննուեցան Հայաստանի մէջ եղածին պէս, բայց Մակեդոնիոյ քրիստոնեաները հեթանոս իրենց ցեղակից ու սահմանակից պետութեանց պաշտպանութեանը երբէք չեն թոյլադրեր որ թուրքը խաղայ իրենց հետ համբարձական նպատակներ իրականացնելու ձգտումով կամ մեծաւատամբ քրիստոնեայ Մակեդոնիոյ իսլամացներու ճեղքերով: Ահա այս է բուն շարժառիթը այն միթիկներուն որ Վանայէ եւ Սօֆիայէ սկսելով Պուլկարիոյ ափէն կողմը տեղի կուենայ հետզհետէ:

Ոչ Մակեդոնացի քրիստոնեաները եւ ոչ ալ անոնց ցեղակից պետութիւնները, կը նկեն որ թուրք կառավարութիւնը իսլամ գաղթականներով խճողէ այդ երկերը ուր բնիկ ժողովուրդը եռվեալ եւ անապահով վիճակ մ'ուի արդէն Սահմանադրական նոր կառավարու-

թեան երկրորդ նախ բարեկարգելէ առաջ, զայն անբարեկարգ օտարական իսլամներով լեցնելը և պետութեան անանկ գանձէն այդ նորեկներուն առատ առատ նպաստ յատկացնելը (մէն մի իսլամ ընտանիքի 50 ոսկի) եւ քրիստոնեաները անարդարանալի պատուարներով հալածելը, բնական է որ իր մէջ ուժ գգացող սլաւ ցեղերը ըմբոստացումի մղէին:

Ահա այդ բնական երեւոյթն է որ կը պարզուի այսօր Պուլկարիոյ մէջ, ուր Մակեդոնացի գաղթականներ եւ բնիկ, Պուլկարներ միահաղոյն բողոքի ձայն կը բարձրացնեն թուրք կառավարութեան դէմ եւ իրենց ազգային ուժին կոթնած Մակեդոնիոյ ազատագրումը կը պահանջեն:

Ինչպէս կը հաստատեն նորագոյն լուրերը Մակեդոնիայէ հասած, թուրքերէր բարեկարգութեան մասին լաւատես եղողներն ալ յուսախաբ եղած կը գտնեն ինքզինքնին: Սահմանադրական թուրքերէր, շեքմապէս յարած յեղափոխական Սանտանեքին եւս վերջերս իր ընկերներով ստիպուել է լեռը քաշուիլ եւ վերստին յեղափոխութեան զօլը պարզել թուրք կառավարութեան գէմ:

Եւրոպական թուրքիոյ սահմաններուն երկու կողմերը արդէն սկսած են մօտալուր փոթորիկ մը զգացնող շարժումներ, ու յիշելով գարունը Պալագան երկրներու համար արկածաբեր ըլլալ կը թուի: Մասնաւորապէս Պուլկարիոյ տրամադիր չորեք երկար ժամանակ տալու թուրք շովէններուն որ իրենց բանակները զօրացընեն, Ֆէրայն-նո թաղաւորը արդէն ապահոված է Սերպիոյ աշակցութիւնը եւ կը թուի թէ ի մօտոյ յաջողի ձեռք բերել Ռումանիոյ գէթ չեզոքութիւնը, որով վախ չունենայ այլ եւս թուրքերէր հետ ընդհարուելու պարագային կունակէն ձեռնուելու: Յունաստանի թեր կամ զէմ ըլլալը ոչ մէկ կերպով երկեղ չաղէր Պուլկարիոյ, արդէն կրէտէի խնդրը երբէք չպիտի թողու որ Յունաստան թուրքիոյ մտերմանայ: Պալագանի թերակղզոյ պետութեանց յարաբերական այս վիճակը, մօտալուր փոթորիկի մը սարսափը ազդելով, կամ պիտի զգոստացնէ Պալագայի թուրք շովէնները եւ կամ Եւրոպական թուրքիոյ ճակատադիւրը պիտի վճռէ միանգամ ընդ միտ:



Հայկազուն

—Օսմ. հայ երեսփոխանն
Գրիգոր էֆ. Զահրապ հետզհե
ծիծաղելի կը դառնայ, իր «ա
տապոս» վերաբերումներովը Ռ.
լըմանին մէջ. Այդ հայ երեսփ
խանը՝ որ իր հայ ընկերներ
մէջ ամէնէն ճարտարախօսն է,
զլանայ հայ ցեղին ոտնահարու
իրաւունքներու պտշտպան
թեան համար երկու խօսքը
մինչ անդին իր կոկորդին բո
ուժովը կը ճգնի՝ միլիոնա
ռոկիներ ծախսելով նոր պա
մը շինել տալ Զրազանի պալատ
տեղ. Մերկ, նութի և անպատ
պար հայ ժողովուրդին փոխ
նորդող այդ գարոնը, միթէ մ
գործած կըլլար եթէ նոր դ
լիճէն բացատրութիւն պահան
հայ ցեղի ներկայ տառապա
մասին, ինչպէս որ Տալէֆը
Մակեդոնիոյ հաւար:

